ԶՈՒՂԱՑԵՑԻ ԽՕՋԱՅ ՆԱԶԱՐ ԵՒ ԻՐ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Գրեց՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԱՅ պատմութեան խորունկ եւ բազմապիսի ծալքերուն մէջ թաղուած կը մնան բազմաթիւ հայ երեւելիներ, որոնց կենսագրութիւնը գոնէ իրենց գլխաւոր գծերուն մէջ մեղի կը մնայ անծանօթ։ Այս անգամ հոս կը ներկայացնեմ մեծանուն Հայ Զուղայեցի վաճառականապետ Խօջայ Նազարը եւ իր գերդաստանը։

Յարութիւն Թ. Տէր Յովհաննեանց Խօջայ Նազարի եւ իր տոհմին մասին կը գրէ.—

«Խօջայ Սաֆար եւ Խօջայ Նազար, երկու եղբարք, որդիք Խօջայ Խաչիկի, (որ ի հին Զուղայ ընկալաւ զերիս աւուրս ի տուն իւր զմեծն Շահաբաս արքայավայել մեծ վայելչութեամբ ասպանջական լինելով նմա). էին նահապետք սոյն ազգատոհմի»1)։

Տէր Յովհաննեանց չըսեր՝ ո՞ւրկէ առնելով կրցած է հաստատել թէ Խօջայ Սաֆար եւ Խօջայ Նազար որդիներն են Հին Զուղայեցի Խօջայ Խաչիկի։ Վերջնոյս մասին ան տեղեկութիւն ունի Առաքել Դաւրիժեցիի Պատմութեան (1896–ի տպագրութեան, 24 էջ) մէջէն, ուր, սակայն, ո՛չ Սաֆար եւ ո՛չ ալ Նազար կը յիշուին։

Ամէն պարագայի տակ Տէր Յովհաննեանց չէր սխալեր իր հաւաստիացման մէջ։ Իմ ձեռագրաց հաւաքածոյին մէջ ունիմ զուտ Մոնկոլական մանրանկարներով ձեռագիր մը՝ կազմուած Ճաշոցի մը եւ Յայսմաւուրքի մը մասերէն, որոնց վերջնոյն իւրաքանչիւր գլուխին տակ գրուած է ստացողի յիշատակարանը։ Առնցմէ Հրոտիցի. Իէ գլխուն տակ կը կարդամ «... ստացողի գրոցս. Խաւջայ Նազարին. եւ կողակցին իւրոյ. որդոցն Պարոն Սարգիսին. Էլիազին. Վաթանին. եւ եղբօրն. Խաւջայ Սաֆարին եւ ծընաւղացն Խօջայ Խաչիկին. Մամին։» (էջ 86ա, 2) Նոյնը կը կրկնուի անդ՝ այլուր։



Խօջայ Նազարի Յայսմաւուրքէն յիշատակարանով հատուած մը։
(Ձեռագիր թիւ 101 Քիւրտեան հաւաքածոյի)

Դարձեալ Նոր Զուղայի թիւ 477 մագաղաթ բոլորգիր աւետարանին (գրուած 1300–ին) վերջին ստացողն է Զալալ Բէկ՝ որդի Խօջայ Սաֆարին, որ թաղուցած է չափագրեալ խիստ շահեկան յիշատակարան մը իր տոհմին ճիւղագրութեան մասին։ Այս յիշատակարանը պիտի ներկայացնեմ իր կարգին, սակայն, հոս հարկ է յիշել որ Զալալ Բէկ իր յիշատակարանին մէջ կը յիշէ «Այլ եւ պապուն իւրեանց մեծին, իշխանաշուք Աղա Խաչիկին, իւրեանց հա-

1) Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան։— 1880, Նոր Զուղայ, էջ 88։